

Հաստատում են՝  
ԼՂՀ Կրթության և գիտության  
նախարար  
Վեդրիկ Վեյտիկյան  
Հակոբյան  
2015թ.

Հաստատում են՝  
ԼՂՀ Կրթության և գիտության  
նախարար  
Վ. Անդրեան  
« 10 »  
2015թ.

Հանձնայնեցված է՝  
ԿԱ արտակարգ իրավիճակների պետական ծառայության  
տնօրեն՝ գնդապետ Ա. Հարությունյան  
« 10 » 2015թ.

## Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

### «Արծվիկ» ռազմամարզական խաղի հանրապետական մրցումների

#### 1. Նպատակը և խնդիրները

- Դպրոցականների մեջ սեր դաստիարակումը դեպի ռազմական գործը,  
- Ռազմական գործի ուսումնասիրումը, ՆՁՊ ծրագրի յուրացումը,  
- Դպրոցականների նախապատրաստումը հայրենիքի պաշտպանությանը,  
- Հանրապետության դպրոցներում ռազմամարզական խաղերի հետագա զարգացումն ու  
մասսայականացումը:

#### 2. Մրցումների ղեկավարումը

Մրցումների ընդհանուր ղեկավարությունն իրականացնում են ԼՂՀ կրթության և գիտության  
նախարարությունը՝ ԼՂՀ պաշտպանության նախարարության աջակցությամբ, իսկ անմիջական  
անցկացումը կազմակերպում է մրցավարական հանձնախումբը:

#### 3. Մրցումների անցկացման վայրը և ժամկետը

«Արծվիկ» ռազմամարզական խաղերն անց են կացվում երկու փուլով.  
1-ին փուլ՝ շրջանային /քաղաքային/ -մինչև 2015 թվականի ապրիլի 1-ը  
2-րդ փուլ՝ հանրապետական - 2015 ապրիլի 14-17-ը՝ ՊԲ N 46492 զորամասում:

#### 4. Մասնակիցները

Մրցումներին թույլատրվում է մասնակցել հանրապետության հանրակրթական, միջին  
մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների նախագորակոչային  
տարիքի սովորողներին: Հաստատությունը ներկայացնում է ջոկ, որի կազմի մեջ մտնում են 6  
տղա, 3 աղջիկ, զինդեկ և ֆիզկուլտուրայի ուսուցիչ, ընդամենը 11 հոգի:

Արգելվում է մասնակցել տարբեր հաստատությունների հավաքական կազմով:

Հանրապետական առաջնությունում մասնակցում են շրջանային /քաղաքային/ փուլում  
հաղթող ճանաչված հաստատությունների ջոկերը: 2-րդ փուլին ջոկերը մասնակցում են  
ռազմամարզական համազգեստով:

#### 5. Ծրագիրը

1. Շարային պատրաստություն,
2. ԿԱ ոչ լրիվ քանդում և հավաքում, պահեստատուփի լիցքավորում,
3. Հրաձգություն ԿԱ-ից,
4. Քաղաքացիական պաշտպանություն,
5. Ֆիզիկական պատրաստություն:

## **6. Առաջնության որոշման կարգը**

Բոլոր մրցածներում /բացառությամբ շարային պատրաստության/ արդյունքները գնահատվում են «Արծվիկ» ռազմամարզական խաղերի համար նախատեսված «Արդյունքների գնահատման աղյուսակով» /կցվում է/:

Մրցումներում հաշվի է առնվում ջոկի բոլոր մասնակիցների արդյունքները: Յուրաքանչյուր մրցածնում առաջին տեղ գրաված ջոկը ստանում է այնքան միավոր, որքան թիմ է մասնակցում մրցությանը: Հերթական տեղեր գրավածները մեկական միավոր քիչ: Օրինակ՝ եթե մրցումներին մասնակցել է 8 ջոկ, ապա առաջին տեղ գրաված ջոկը ստանում է 8 միավոր, երկրորդ տեղը՝ 7, երրորդ տեղը՝ 6 և այլն:

Ընդհանուր թիմային առաջնությունը որոշվում է ջոկերի առանձին մրցածներում հավաքած միավորների գումարով: Ընդհանուր հաշվարկում հավասար միավորների դեպքում առավելությունը տրվում է այն ջոկին, որը լավագույն է ձանաչվել՝ հրաձգությունից, իսկ դրա հավասարության դեպքում՝ ավտոմատի (ԿԱ) ոչ լրիվ քանդում և հավաքում վարժածնից, այնուհետև ֆիզիկական պատրաստությունից:

## **7. Ֆինանսական ծախսերը**

Մրցումների մասնակիցների սննդի, գիշերավարձի, ճանապարհածախսի, մրցավարների և սպասարկող անձնակազմերի օրապահիկների վճարման, հաղթողների պարգևատրման ծախսերը հոգում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը:

Նյութական և գործնական ապահովումը՝ կապված կրակային և շարային պատրաստության հետ, կազմակերպում է ԼՂՀ պաշտպանության նախարարությունը, քաղաքացիական պաշտպանության հետ կապված՝ ԼՂՀ ԿԱ արտակարգ իրավիճակների պետական ծառայությունը:

## **8. Պարգևատրությունը**

Ընդհանուր թիմային հաշվարկում մրցանակային տեղեր գրաված ջոկերը պարգևատրվում են ԼՂՀ պաշտպանության ու կրթության և գիտության նախարարությունների համապատասխան կարգի դիպլոմներով, պատվոգրերով և արժեքավոր նվերներով:

Ռազմամարզական խաղերի հաղթող ջոկի մասնակիցները խրախուսվում են ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված դրամական պարգևով:

Քաղաքացիական պաշտպանության մրցածներում հաղթող ջոկերը պարգևատրվում են ԼՂՀ ԿԱ արտակարգ իրավիճակների պետական ծառայության մրցանակներով:

Առանձին մրցածներում առավելագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները պարգևատրվում են մրցանակներով:


## **9. Հայտերը**


Մրցումների մասնակից ջոկերի անվանական հայտերը 2 օրինակից ներկայացվում են մրցումների ժամանակ օրը՝ ապրիլի 14-ին /հայտերի ձևը կցվում է/:

Սույն կանոնակարգը հանդիսանում է պաշտոնական հրավեր մրցումներին մասնակցելու համար:

Յուրաքանչյուր ջոկ ներկայանալով մրցումներին պետք է ունենա հակազագ ԳՊ – 5, 9 հատ հարմարեցված մասնակիցների չափերին:

**Կանոնակարգին կցվում է ռազմամարզական խաղերի մրցածների ցանկը /հավելված 1/ և մրցածներում թույլ տրված սխալների ցանկը /հավելված 2/**

ԼՂՀ ՊՆ ռազմահայրենասիրական  
դաստիարակության և հասարակական  
կազմակերպությունների հետ կապերի  
բաժնի պետ  
գնդապետ՝  Բ. Մուրադյան

ԼՂՀ ԿԳՆ ռազմահայրենասիրական,  
ֆիզդաստիարակության և հասարակական  
կազմակերպությունների հետ կապերի  
բաժնի վարիչ՝  Վ. Գրիգորյան



## «Արծվիկ» ռազմամարզական խաղերի մրցածևեր

### 1. Շարային պատրաստություն

ա/ Հանդիսավոր երթով անցնելը

բ/ Շարային երգի կատարումը շարժման ընթացքում

գ/ Ջոկի հրամանատարի գործողությունները՝ ստուգում է դպրոցի զինվորական ղեկավարը

դ/ Գործողություններ ջոկի կազմով

- միատողան շարքից երկտողան շարք կազմելը և հակառակը
- ջոկի նոսրացումը և խտացումը միատողան և երկտողան շարքերից /դեպի ձախ, աջ, կենտրոն/
- դարձումներ տեղում
- շարժման ընթացքում միաշարասյուն շարքից երկշարասյուն կազմելը և հակառակը
- դարձումներ շարժման ժամանակ

ե/ Անհատական պատրաստություն՝ ջոկը մասնակցում է լրիվ կազմով /ստուգում է ջոկի հրամանատարը /

- արտաքին տեսքի ստուգում
- շարային կեցվածքի ստուգում
- շարքից դուրս գալը
- դարձումներ տեղում
- շարային քայլով շարժումը
- դարձումներ շարժման ժամանակ
- զինվորական ողջույնի կատարումը շարժման ընթացքում
- Վետին մոտենալը և նրանից հեռանալը
- շարք վերադառնալը

Ծանոթություն: Յուրաքանչյուր վարժածև գնահատվում է 5/հինգ/ միավորանոց համակարգով, վերջում հաշվելով բոլոր միավորների գումարը:

### 2. Կալաշնիկովի ավտոմատ

ա/ ոչ լրիվ քանդում և հավաքում

բ/ պահեստատուփի լիցքավորումը փամփուշտներով:

Ծանոթություն: 1. Հաշվի է առնվում քանդելու և հավաքելու արագությունն ու հաջորդականությունը:

2. Այս մրցածևում ջոկի վերջնական գնահատականը որոշվում է 2 վարժությունների գրաված տեղերի գումարով:

### 3. Հրաձգություն կալաշնիկովի ավտոմատից

Նախնական վարժություն – հրաձգություն պառկած դիրքից անշարժ թիրախի վրա:

Նպատակակետ – թիվ 4 թիրախ / կրծքային ֆիզուր շրջաններով/:

Հեռավորությունը – 100մ:

Փամփուշտների քանակը 8 հատ, որից 3-ը՝ փորձնական, 5-ը՝ ստուգարքային:

Ծանոթություն: 1. Հանրապետական փուլին նախապատրաստվելու համար ջոկերին առաջարկվում է օգտվել կցված գործանատրի ուսումնանյութական բազաներից:

2. Անհատական հաշվարկով հաղթողին որոշելու համար հավասար միավորների դեպքում

ա/ եթե երկու և ավելի տղաներ կամ աղջիկներ են, կատարում են լրացուցիչ հրաձգություն 5 փամփուշտից,

բ/ եթե աղջիկ և տղա են, առավելությունը տրվում է աղջկան:

1. Ոետինե լարանի տեղադրումը բազուկի վրա:

2. Վիրավորի տեղափոխումը 15մ հեռավորության վրա:

3. Գլխի վիարկապումը:

Ծանոթություն: Քաղաքացիական պաշտպանության մրցաձևում ջոկի վերջնական տեղը որոշվում է անցկացված 4 վարժություններից գրաված տեղերի գումարով:

### 4. Քաղաքացիական պաշտպանություն

ա/ ԳՊ – 5 հակազազի հագնելը /ջոկը մասնակցում է լրիվ կազմով/:

բ/ Գործողություններ միջուկային զենքի պայթյունի բռնկման ժամանակ /ջոկը մասնակցում է լրիվ կազմով/:

գ/ Համագործակցության պաշտպանական լրակազմի հագնելը /ՕՅԿ/ մասնակցում են 2 աշակերտ:

դ/ Բժշկական պատրաստություն / մասնակցում են երկու աղջիկ և երկու տղա/:

### 5. Ֆիզիկական պատրաստություն

Տղաներ – վազք 100մ, 1000մ, ձգումներ կախ դրությունից, 700 գրամանոց նռնակի նետում հեռավորության վրա:

Աղջիկներ – վազք 100մ, 500մ, ձեռքերի ծալում և ուղղում հենում պառկած դրությունից, 500 գրամանոց նռնակի նետում հեռավորության վրա:

Ծանոթություն: 1. Ֆիզիկական պատրաստության մրցաձևում ջոկի վերջնական տեղը որոշվում է անցկացված 4 վարժություններից գրաված տեղերի գումարով:

2. Աղյուսակը կցվում է:

«Արծվիկ» ռազմամարզական խաղերի ժամանակ  
թույլ տրված սխալների ցանկը

Շարային Պատրաստություն

1. Հանդիսավոր երթով անցնելը

- խախտվում է շարքի կարգապահությունը

2. Շարային երգի կատարումը շարժման ընթացքում

- երգը շարային և ռազմահայրենասիրական չէ
- չի պահպանվում շարքի սահմանված հեռավորությունը և տարածությունը

3. Անհատական պատրաստություն

ա/ արտաքին տեսքի ստուգում

բ/ շարային կեցվածքի ստուգում

- դաստակները թեքված չեն ավերով ներս, ձեռքերի մատները կիսափակ վիճակում չեն
- ոտնաթաթերը մի թաթի լայնությամբ բացված չեն, ծնկներում ծալված են
- ուսերը բացված չեն, գլուխը բարձր չի պահված և չի նայում ուղիղ դեպի առաջ

գ/ շարքից դուրս գալը

- շարքից դուրս գալուց աշակերտը չի շրջվել դեմքով դեպի շարքը
- երկրորդ տողանից դուրս գալիս աշակերտը ձախ ձեռքը թեթևակի չի դրել առջևում կանգնած աշակերտի ուսին

դ/ շրջադարձերը տեղում

- ձեռքերը անջատվում են մարմնից
- շրջադարձը իրանի կտրուկ շրջումով չի կատարվում
- ոտքը կարճ ճանապարհով չի միացվում

ե/ շարային քայլով շարժումը

- շարժումը սկսվում է աջ ոտքից
- ոտնաթաթերը ձգված վիճակով չեն բարձրացնում գետնից 15-20 սմ բարձրությամբ
- ոտքը չի դրվում գետնին ամբողջ ներքանով
- ձեռքերի շարժումը դեպի ետ մինչև վերջը չի կատարվում

զ/ դարձումներ շարժման ընթացքում

- /ետ դարձ/ շրջադարձը երկու ոտնաթաթերի ծայրերի վրա չի կատարվում և դեպի առաջ չի բարձրացնում ճարմանից ավաչափ բարձրության և հեռավորության վրա
- շրջադարձերի ժամանակ ձեռքերի շարժումները քայլերին համաչափ չեն կատարվում
- ետ դարձի պահին ձեռքերը հպվում են ազդրին

է/ զինվորական ողջույնի կատարումը շարժման ընթացքում

- 3-4 քայլ հեռավորությունը չի պահպանվում
- ողջունելիս ձախ ձեռքը չի պահվում ազդրի մոտ անշարժ

ը/ պետին մոտենալը և նրանից հեռանալը

- կարճ ճանապարհով չի մոտենում պետին և նրանից հեռանում
- պետին մոտենալու ժամանակ չի պահպանվում նրանից 2-3 քայլ հեռավորությունը
- ոտքը ոտքին միացնելու հետ միաժամանակ ձեռքը չի մոտեցվում գլխարկին
- ձեռքը առաջին քայլի հետ միաժամանակ չի իջեցվում

թ/ շարք վերադառնալը

- լսելով իր ազգանունը աշակերտը չի շրջվել դեմքով դեպի պետը
- ձեռքը չի մոտեցվել ազդրին

4. Գործողությունները ջրկի կազմով

ա/ միատողան շարքից երկտողան շարքի կազմելը

- աշակերտները արագորեն գլուխները չեն շրջում դեպի իրենց ձախ կողմը կանգնած աշակերտը
- չի պահպանվում սահմանված հեռավորությունը և տարածությունը

5. Ջրկի հրամանատարի գործողությունների գնահատում

- հրամանները տալիս չի ընդունում շարային կեցվածք
- «Ջրկ, հաջորդականությամբ /հերթով/ հաշվիր» հրամանը չի տրվել
- «Կարգի բերել» հրամանից առաջ չի տրվել «Ազատ» հրամանը
- նախահրամանը և կատարողականը չի տալիս համապատասխան ոտքը ձեռնին դնելու հետ միաժամանակ:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. /տուգանք 3 վրկ/

- հակազազը հազնելու ժամանակ աշակերտը չի փակել աչքերը, չի դադարեցրել շնչառությունը, հազնելուց հետո չի արտաշնչվել,
- սաղավարտ-դիմակը թեքված է, կամ գլխարկը գլխի մասում ծալված է

2. Գործողություններ միջուկային զենքի պայթյունի բռնկման ժամանակ /տուգանք 0,5 վրկ/

- չի թաքցրել ձեռքերի թաթերը և չի բարձրացրել հագուստի օձիքը, ոտքերը միասին չեն և ոտքերի թաթերը զետնին սեղմված չեն
- պատկում է դեպի պայթյունի ուղղությամբ

3. ՀՊԼ /03Կ/ - կոճակները չի կոճկված: Հերթականությունը խախտված է: /տուգանք 10 վրկ/

4. Առաջին բուժօգնություն

ա/ Ռետինե լարանի տեղադրումը

- գրությունը չի տեղադրված լարանի արանքում և լրիվ գրառում չի կատարված /տուգանք 3 վրկ/
- լարանը թույլ տեղադրման դեպքում մասնակիցը ստանում է 0 միավոր:

բ/ Վիրավորի տեղափոխումը

- ոչ համաձայնեցված գործողություն /տուգանք 3 վրկ/
- վիրավորը ընկնելու դեպքում թիմը ստանում է 0 միավոր

գ/ Գլխի վիրակապումը

- լրիվությամբ գլուխը չի փաթաթված /տուգանք 30 վրկ/
- վիրակապի ճշտությունը չի պահպանվում /30 վրկ/
- 2/3 կանոնը չի պահպանվում /տուգանք 30 վրկ/

**Ի Ն Ք Ն Ա Չ Ի Գ Ի Ք Ա Ն Դ Ե Լ Ն ՈՒ Հ Ա Վ Ա Ք Ե Լ Ը**

- խախտում է քանդելու և հավաքելու հաջորդականություն, քանդված մասերը հերթականությամբ չի տեղադրված սեղանին

**Ծանոթություն:** Մրցումների ժամանակ անվտանգության կանոնները խախտելու դեպքում /նշան բռնել ու ուղղել ինքնաձիգը դեպի թիկունք, աջ ու ձախ, մարդկանց վրա նշան բռնել ու քաշել ձգանք/ աշակերտը հեռացվում է վարժությունը կատարելուց և ստանում է 0 միավոր Յուրաքանչյուր սխալի համար տուգանվում է 0,5 վրկ: